

**ԿՈՆՎԵՆՑԻԱ**  
**ՄԻԱՎՈՐՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ**  
**ԻՐԱՎՈՒՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Աշխատանքի միջազգային կազմակերպության Գլխավոր խորհրդաժողովը, գումարված Աշխատանքի միջազգային բյուրոյի Վարչական խորհրդի կողմից՝ Սան Ֆրանցիսկոյում, եւ հավաքված 1948թ. հունիսի 17-ին՝ իր երեսուներորդ նստաշրջանին,

որոշում կայացնելով միավորման ազատության եւ կազմակերպելու իրավունքի պաշտպանության մասին որոշ առաջարկություններ կոնվենցիայի ձեւով ընդունելու վերաբերյալ, որը նստաշրջանի օրակարգի յոթերորդ կետն է,

գտնելով, որ Աշխատանքի միջազգային կազմակերպության կանոնադրության նախաբանը աշխատանքի պայմանները բարելավելու եւ խաղաղությունը ապահովելու միջոցների թվում հռչակում է "միավորման ազատության սկզբունքի ճանաչումը",

համարելով, որ Ֆիլադելֆիայի հռչակագիրը վերահաստատել է, որ "արտահայտվելու եւ միավորման ազատությունը կայուն առաջընթացի անհրաժեշտ պայմաններ են",

գտնելով, որ Աշխատանքի միջազգային խորհրդաժողովը իր երեսուներորդ նստաշրջանում միաձայն ընդունել է սկզբունքներ, որոնք պետք է դրվեն միջազգային կանոնակարգման հիմքում,

հաշվի առնելով, որ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեան իր երկրորդ նստաշրջանում հավանություն է տվել այդ սկզբունքներին եւ խնդրել է Աշխատանքի միջազգային կազմակերպությանը շարունակել գործադրել բոլոր ջանքերը՝ հնարավորության դեպքում մեկ կամ մի քանի միջազգային կոնվենցիաներ ընդունելու նպատակով,

հազար ինը հարյուր քառասունութ թվականի հուլիսի իննին ընդունում է ներքոհիշյալ կոնվենցիան, որը կանվանվի Միավորման ազատության եւ կազմակերպելու իրավունքի պաշտպանության մասին 1948 թվականի Կոնվենցիա:

**Բաժին I. Միավորման ազատություն**

**ՅՈՒՐԱԿԱՆ 1**

Աշխատանքի միջազգային կազմակերպության յուրաքանչյուր անդամ, որի նկատմամբ սույն Կոնվենցիան ուժի մեջ է, պարտավորվում է գործադրել ներքոհիշյալ դրույթները:

**ՅՈՒՐԱԿԱՆ 2**

Աշխատողները եւ գործատուները, առանց որեւէ տարբերության, իրավունք ունեն իրենց ընտրությամբ ստեղծելու կազմակերպություններ, ինչպես նաեւ անդամակցելու այդպիսի կազմակերպություններին՝ վերջիններիս կանոնադրություններին ենթարկվելու միակ պայմանով, առանց նախնական թույլտվության:

**ՅՈՒՐԱԿԱՆ 3**

1. Աշխատողների եւ գործատուների կազմակերպություններն իրավունք ունեն մշակելու իրենց կանոնադրություններն ու կանոնակարգերը, ազատորեն ընտրելու իրենց ներկայացուցիչներին, կազմակերպելու իրենց վարչակազմն ու գործունեությունը եւ կազմելու իրենց ծրագրերը:

2. Պետական մարմինները պետք է ձեռնպահ մնան որեւէ միջամտությունից, որը սահմանափակում է այդ իրավունքը կամ խոչընդոտում է դրա օրինական իրականացմանը:

**ՅՈՒՐԱԿԱՆ 4**

Աշխատողների եւ գործատուների կազմակերպությունները ենթակա չեն լուծարման կամ ժամանակավոր արգելման վարչական մարմնի կողմից:

#### ՀՈՂՎԱԾ 5

Աշխատողների եւ գործատուների կազմակերպություններն ունեն դաշնություններ եւ համադաշնություններ ստեղծելու եւ դրանց անդամակցելու իրավունք, եւ յուրաքանչյուր այդպիսի կազմակերպություն, դաշնություն կամ համադաշնություն իրավունք ունի անդամակցելու աշխատողների եւ գործատուների միջազգային կազմակերպություններին:

#### ՀՈՂՎԱԾ 6

2-րդ, 3-րդ եւ 4-րդ հոդվածների դրույթները կիրառվում են աշխատողների եւ գործատուների կազմակերպությունների դաշնությունների եւ համադաշնությունների նկատմամբ:

#### ՀՈՂՎԱԾ 7

Աշխատողների եւ գործատուների կազմակերպությունների, նրանց դաշնությունների եւ համադաշնությունների կողմից իրավաբանական անձի կարգավիճակի ձեռքբերումը չի կարող ենթակա լինել այնպիսի պայմանների, որոնք ունեն 2-րդ, 3-րդ եւ 4-րդ հոդվածների դրույթների կիրառումը սահմանափակող բնույթ:

#### ՀՈՂՎԱԾ 8

1. Սույն Կոնվենցիայով ճանաչված իրենց իրավունքների իրականացման ժամանակ աշխատողները, գործատուները եւ նրանց համապատասխան կազմակերպությունները պահպանում են օրինականությունը այնպես, ինչպես այլ անձինք կամ կազմակերպված կոլեկտիվները:

2. Ազգային օրենսդրությունը չպետք է ազդի կամ կիրառվի այնպես, որ վնաս հասցնի սույն Կոնվենցիայով նախատեսված երաշխիքներին:

#### ՀՈՂՎԱԾ 9

1. Ազգային օրենսդրությամբ է որոշվում, թե սույն Կոնվենցիայով նախատեսված երաշխիքներն ինչ չափով են կիրառվում գինված ուժերի եւ ոստիկանության նկատմամբ:

2. Աշխատանքի միջազգային կազմակերպության կանոնադրության 19-րդ հոդվածի 8-րդ կետում շարադրված սկզբունքին համապատասխան՝ Կազմակերպության որեւէ անդամի

կողմից սույն Կոնվենցիայի վավերացումը չպետք է դիտվի որպես ցանկացած գործող օրենքի, դատական որոշման, սովորույթի կամ համաձայնագրի վրա ազդող գործողություն, որոնց համաձայն գինված ուժերի եւ ոստիկանության անդամներն օգտվում են սույն Կոնվենցիայով երաշխավորված որեւէ իրավունքից:

#### ՀՈՂՎԱԾ 10

Սույն Կոնվենցիայում "կազմակերպություն" տերմինը նշանակում է աշխատողների կամ գործատուների ցանկացած կազմակերպություն, որի նպատակն է ապահովել եւ պաշտպանել աշխատողների կամ գործատուների շահերը:

Բաժին II. Կազմակերպելու իրավունքի պաշտպանություն

#### ՀՈՂՎԱԾ 11

Աշխատանքի միջազգային կազմակերպության յուրաքանչյուր անդամ, որի նկատմամբ սույն Կոնվենցիան ուժի մեջ է, պարտավորվում է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ եւ համապատասխան միջոցները՝ աշխատողների եւ գործատուների կազմակերպելու իրավունքի ազատ իրականացումը երաշխավորելու նպատակով:

### Բաժին III. Այլ դրույթներ

#### ՀՈՂՎԱԾ 12

1. Սույն Կոնվենցիան վավերացնող Աշխատանքի միջազգային կազմակերպության յուրաքանչյուր անդամ Աշխատանքի միջազգային կազմակերպության 1946 թվականի Փոփոխման ակտով փոփոխված կանոնադրության 35-րդ հոդվածում նշված տարածքներից եւ

սույն հոդվածի 4-րդ եւ 5-րդ ենթակետերում նշվածներից այլ տարածքների կապակցությամբ վավերացումից հետո՝ հնարավորինս սեղմ ժամկետներում, Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենին ուղարկում է հայտարարություն, ուր նշում է.

ա) այն տարածքները, որոնց նկատմամբ ինքը պարտավորվում է կիրառել սույն Կոնվենցիայի դրույթները առանց փոփոխությունների,

բ) այն տարածքները, որոնց նկատմամբ ինքը պարտավորվում է կիրառել սույն Կոնվենցիայի դրույթները փոփոխություններով, եւ՝ այդ փոփոխությունների մանրամասները,

գ) այն տարածքները, որոնց նկատմամբ Կոնվենցիան չի կիրառվի եւ, նման դեպքերում, չկիրառվելու պատճառները,

դ) այն տարածքները, որոնց նկատմամբ ինքը վերապահում է անում:

2. Սույն հոդվածի 1-ին կետի "ա" եւ "բ" ենթակետերում հիշատակված պարտավորությունները համարվում են վավերագրի անբաժանելի մասը եւ ունեն վավերացմանը հավասար ուժ:

3. Ցանկացած անդամ կարող է նոր հայտարարության միջոցով վերացնել սույն հոդվածի առաջին կետի "բ", "գ" կամ "դ" ենթակետերի հիման վրա իր նախորդ հայտարարություններում պարունակվող բոլոր վերապահումները կամ դրանց մի մասը:

4. Ցանկացած անդամ այն ժամկետներում, որոնց ընթացքում սույն Կոնվենցիան կարող է չեղյալ հայտարարվել՝ 16-րդ հոդվածի դրույթներին համապատասխան, կարող է Գլխավոր տնօրենին ուղարկել նոր հայտարարություն, որը ցանկացած այլ առումով կփոփոխի ցանկացած նախորդ հայտարարության պայմանները, եւ հայտնել իր սահմանած տարածքների ներկա դրության մասին:

#### ՀՈՂՎԱԾ 13

1. Եթե սույն Կոնվենցիայում շոշափվող հարցերը մտնում են մետրոպոլիայից դուրս գտնվող տարածքի իշխանությունների իրավասության մեջ, կազմակերպության այն անդամը, որը պատասխանատու է այդ տարածքի միջազգային հարաբերությունների համար,

կարող է, այդ տարածքի կառավարության հետ համաձայնեցնելով, Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենին ներկայացնել տվյալ տարածքի անունից հայտարարություն սույն Կոնվենցիայից բխող պարտավորությունների ընդունման մասին:

2. Սույն Կոնվենցիայով պարտավորված լինելու մասին հայտարարություն կարող է ներկայացվել Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենին՝

ա) կազմակերպության երկու կամ ավելի անդամների կողմից՝ նրանց համատեղ կառավարման տակ գտնվող տարածքի վերաբերյալ, կամ

բ) ցանկացած միջազգային մարմնի կողմից, որը պատասխանատու է որեւէ տարածքի կառավարման համար Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության դրույթների

հիման վրա կամ այլ կերպ:

3. Այն հայտարարություններում, որոնք ուղարկվում են Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենին սույն հոդվածի նախորդ կետերին համապատասխան, նշվում են՝ սույն Կոնվենցիայի դրույթները նման տարածքում կիրառվելու են փոփոխություններով, թե՛ առանց փոփոխությունների: Եթե հայտարարությունում նշվում է, որ Կոնվենցիայի դրույթները կիրառվելու են փոփոխություններով, նրանում ճշտվում է նշված փոփոխությունների բովանդակությունը:

4. Կազմակերպության շահագրգիռ անդամը կամ անդամները կամ շահագրգիռ միջազգային մարմինը կարող են հետագայում հայտարարության միջոցով լիովին կամ մասնակիորեն հրաժարվել նախորդ որեւէ հայտարարությունում նշված որեւէ փոփոխությունից օգտվելու իրավունքից:

5. Կազմակերպության շահագրգիռ անդամը կամ անդամները կամ միջազգային մարմինը այն ժամկետներում, երբ սույն Կոնվենցիան կարող է չեղյալ հայտարարվել՝ 16-րդ հոդվածի դրույթներին համապատասխան, կարող են Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենին ուղարկել նոր հայտարարություն, որը ցանկացած այլ առումով կփոփոխի ցանկացած նախորդ հայտարարության պայմանները, եւ հայտնել Կոնվենցիայի կիրառման գոյություն ունեցող վիճակի մասին:

#### Բաժին IV. Եզրափակիչ դրույթներ

##### ՅՈՂՎԱԾ 14

Սույն Կոնվենցիայի վավերագրերը գրանցման նպատակով ուղարկվում են Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենին:

##### ՅՈՂՎԱԾ 15

1. Սույն Կոնվենցիան պարտադիր է Աշխատանքի միջազգային կազմակերպության միայն այն անդամների համար, որոնց վավերագրերը գրանցված են Գլխավոր տնօրենի կողմից:

2. Այն ուժի մեջ է մտնում Կազմակերպության երկու անդամների վավերագրերը Գլխավոր տնօրենի կողմից գրանցվելու օրվանից տասներկու ամիս հետո:

3. Կազմակերպության յուրաքանչյուր անդամի նկատմամբ հետագայում սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում նրա վավերագրի գրանցումից տասներկու ամիս անց:

##### ՅՈՂՎԱԾ 16

1. Սույն Կոնվենցիան վավերացրած յուրաքանչյուր անդամ կարող է նրա ուժի մեջ մտնելու օրվանից տասնամյա ժամկետը լրանալուց հետո այն չեղյալ հայտարարել Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենին գրանցման նպատակով չեղյալ հայտարարման մասին ակտ ներկայացնելու միջոցով: Չեղյալ հայտարարելն ուժի մեջ է մտնում չեղյալ հայտարարելու վերաբերյալ ակտի գրանցումից մեկ տարի հետո:

2. Կազմակերպության յուրաքանչյուր անդամ, որը վավերացրել է սույն Կոնվենցիան, եւ որը նախորդ կետում նշված տասնամյա ժամանակահատվածը լրանալուց հետո մեկամյա ժամկետում չի օգտվի սույն հոդվածում նախատեսված չեղյալ հայտարարելու իր իրավունքից, պարտավորված կլինի հաջորդ տասնամյա ժամկետում եւ այնուհետեւ սույն հոդվածով սահմանված կարգով կկարողանա սույն Կոնվենցիան չեղյալ հայտարարել յուրաքանչյուր տասնամյա ժամկետը լրանալուց հետո:

##### ՅՈՂՎԱԾ 17

1. Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենը Աշխատանքի միջազգային կազմակերպության բոլոր անդամներին ծանուցում է Կազմակերպության անդամներից իր ստացած վավերագրերի, հայտարարությունների եւ չեղյալ հայտարարելու վերաբերյալ բոլոր ակտերի գրանցման մասին:

2. Կազմակերպության անդամներին ծանուցելով իր ստացած 2-րդ վավերագրի գրանցման մասին՝ Գլխավոր տնօրենը նրանց ուշադրությունը հրավիրում է սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվա վրա:

#### ՅՈՒՐԱԿՐԻ 18

Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենը, Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 102-րդ հոդվածին համապատասխան, գրանցման համար

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ուղարկում է ամբողջական

տեղեկություններ բոլոր վավերագրերի, հայտարարությունների եւ չեղյալ հայտարարման վերաբերյալ ակտերի մասին, որոնք իր կողմից գրանցվել են նախորդ հոդվածների դրույթներին համապատասխան:

#### ՅՈՒՐԱԿՐԻ 19

Աշխատանքի միջազգային բյուրոյի Վարչական խորհուրդը ամեն անգամ, երբ անհրաժեշտ է համարում, Գլխավոր խորհրդաժողովին զեկույց է ներկայացնում սույն Կոնվենցիայի կիրառման մասին եւ քննարկում է խորհրդաժողովի օրակարգում դրա լրիվ կամ մասնակի վերանայման հարցի ընդգրկման նպատակահարմարությունը:

#### ՅՈՒՐԱԿՐԻ 20

1. Այն դեպքում, երբ խորհրդաժողովը կընդունի նոր կոնվենցիա, որն ամբողջովին կամ մասնակիորեն կվերանայի սույն Կոնվենցիան, եւ եթե այդ կոնվենցիայում նախատեսված չլինի հակառակը, ապա՝

ա) Կազմակերպության որեւէ անդամի կողմից նոր, վերանայող կոնվենցիայի վավերացումը ipso jure, անկախ 16-րդ հոդվածի դրույթներից, առաջ կբերի սույն Կոնվենցիայի անհապաղ չեղյալ հայտարարում՝ այն պայմանով, որ նոր, վերանայող կոնվենցիան ուժի մեջ մտած լինի,

բ) նոր, վերանայող կոնվենցիայի ուժի մեջ մտնելու թվականից սկսած՝ սույն Կոնվենցիան փակ է Կազմակերպության անդամների կողմից վավերացվելու համար:

2. Սույն Կոնվենցիան բոլոր դեպքերում ըստ ձեւի եւ բովանդակության մնում է ուժի մեջ Կազմակերպության այն անդամների նկատմամբ, որոնք այն վավերացրել են, բայց վերանայող կոնվենցիան չեն վավերացրել:

#### ՅՈՒՐԱԿՐԻ 21

Սույն Կոնվենցիայի անգլերեն եւ ֆրանսերեն տեքստերը հավասարազոր են:

Կոնվենցիան ուժի մեջ է մտել 2006թ. հունվարի 2-ից: